

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

16.03.2012թ.

**գ. Կամարիս**

Ի կատարումը ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի հունվարի 30-ի N 11-Ա հրամանով հաստատված վարչական հսկողություն իրականացնելու 2012 թվականի աշխատանքային ծրագրի, ՀՀ Կոտայքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 22-ի թիվ 10-Ա կարգադրության և մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2012 թվականի փետրվարի 28-ի N 27-Ա հրամանի՝ ս. թ. մարտ 13-ից մարտի 15-ը ներառյալ Կոտայքի մարզի Կամարիսի գյուղապետարանում իրականացվեց վարչական հսկողություն: Վարչական հսկողությունը իրականացվել է ՀՀ փոխվարչապետի 2012 թվականի հունվարի 30-ի N 02-Ն հրամանով հաստատված՝ ՀՀ մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության իրականացման և կադրային գործի վարման, մեթոդական ուղեցույցի համաձայն: Ուսումնասիրությունները իրականացվել են հետևյալ կազմով՝ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ս. Հակոբյան (աշխատանքային խմբի ղեկավար), նույն վարչության՝ ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի առաջատար մասնագետ Ռ. Թումոյան, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության՝ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Կ. Հունանյան, նույն բաժնի առաջատար մասնագետ Ս. Բաղդասարյան, իրավաբանական բաժնի պետ Ա. Հարությունյան, հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Ե. Ավետիսյան, քաղաքաշինության վարչության՝ ճարտարապետաշինարարական բաժնի առաջատար մասնագետ Ա. Վիրաբյան:

Աշխատանքներին մասնակցել են Կամարիս համայնքի ղեկավար Զարգանդ Եգորյանը, աշխատակազմի քարտուղար Հովիկ Սարգսյանը:

Վարչական հսկողությունը ընդգրկել է 2009 թվականի սեպտեմբերից մինչև 2012թ. մարտը ընկած ժամանակահատվածը:

**ՎԱՐՉԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ**

**Ավագանու լիազորությունների նկատմամբ**

1) Կամարիս համայնքի ավագանին ընտրվել է 2008թ. հոկտեմբերի 12-ին և բաղկացած է 6 անդամներից /օրենքով սահմանված թիվը՝ 7/ իր լիազորությունները ստանձնել է 2008թ.-ի նոյեմբերի 11-ին: Ավագանու անդամ Գ. Դանիելյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվել են ավագանու 14.04.2009թ. N 8 որոշումով: ՏԻՄ, հ. 21: /Այս մասին նշվել է նախորդ վարչական հսկողության ակտում:/

2) Կամարիս համայնքի ավագանին իր կանոնակարգը ընդունել է 01.12.2008թ. թիվ 6/1 որոշմամբ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան: Կանոնակարգում /կետ 18-ում/ սահմանված է ավագանու հերթական նիստերի գումարման ժամանակացույց:

3) Համայնքի ավագանին համայնքի 2009-2012թթ. քառամյա զարգացման ծրագիրը հաստատել է 25.02.2009թ. թիվ 4 որոշմամբ:

4) Համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգի մասին որոշում չկա, չի կատարվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջը:

5) Ավագանու առանձին որոշումով համայնքի ղեկավարի վարձատրության չափ չի սահմանվել, չի կատարվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջը /աշխատակազմի հաստիքացուցակով հաստատվել է 180000 դրամ, որը համապատասխանում է օրենքով սահմանված չափին/:

6) Ավագանին օրենքով սահմանված կարգով՝ 23.04.2009թ. թիվ 12 որոշմամբ, համաձայնություն է տվել համայնքի ղեկավարի ներկայացրած՝ <<Կակաչ>> մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում Հասմիկ Եգորյանին

նշանակելու մասին: /ՏԻՄ, հ. 16 մաս 1, կետ 15/: /Մանկապարտեզի կանոնադրությունը ավագանին հաստատել է 14.04.2006թ. թիվ 2 որոշմամբ:/

7) Համայնքային նշանակության փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

8) Ավագանին 24.12.2009թ. N 32, 22.12.2010թ. N 37, 14.12.2011թ. N 30 որոշումներով /հավելվածներ՝ 1, 2, 3/ հաստատել է համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

9) Համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում /2006 թվականի նոյեմբերի 20-ի N 203-Ա հրամանի հավելված N28-ում/ փոփոխություններ և (կամ) լրացումներ չեն կատարվել:

### **Համայնքի ղեկավարի իրականացրած լիազորությունների նկատմամբ**

#### **1. Ֆինանսների բնագավառ**

1. Համայնքի բյուջեի նախագծի, դրանում առաջարկվող փոփոխությունների կազմում համայնքի ավագանու հաստատման ներկայացում, բյուջեի կատարման ապահովում և բյուջեի կատարման վերաբերյալ եռամսյա հաղորդումների և տարեկան հաշվետվության ներկայացում համայնքի ավագանուն:

Համայնքի բյուջեում 2009.2010.2011թթ-ին համապատասխանաբար կատարվել են հինգ, երեք և հինգ փոփոխություններ:

Տեղական հարկերի, տուրքերի և վճարների՝ օրենքով սահմանված տեսակների և դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերի ներկայացում ավագանու հաստատմամբ:

Համայնքի բյուջեն հարկային եկամուտների տեսակներից համալրված է ուղղակի հարկերով՝ հողի հարկ և գույքահարկ, որոնց հաշվառումը, հաշվարկումը և հավաքագրումը իրականացվում է ավտոմատ տեղեկատվական համակարգի միջոցով, իսկ գույքահարկի գծով համայնքի ավագանու կողմից արտոնություն սահմանվել է վարչական հսկողությամբ ներառված ժամանակահատվածում մեկ անգամ: Համայնքի ավագանու կողմից տեղական տուրքերի դրույքաչափերը սահմանվել է օրենքով նախատեսված ժամկետներում և չափերով: Այսինքն բյուջեի եկամտային մասի տեղական տուրքերի հաստատվելու համար չկա ստույգ հաշվարկ տեղական տուրքերի տվյալ բյուջետային տարում գանձման ենթակա գումարի վերաբերյալ հիմնավորում, որի համար հիմք կարող է ծառայել տեղական տուրքերով հարկվող օբյեկտների գույքագրման տվյալները:

2. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, գույքի վարձավճարների գանձման և վերահսկման իրականացում:

Համայնքի բյուջեի եկամուտների հավաքագրումը բյուջե իրականացվում է ՀՀ կառավարության 2003թ-ի N 750-Ն որոշմամբ սահմանված կարգով և <Դրամարկղային գործառնությունների իրականացման կարգով>:

3. Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցների կիրառում:

Հսկողությամբ ներառված ժամանակաըջաններում ինչպես դատական այնպես էլ ժամանակացույցերով հարկային խոշոր պարտքերի առաջ պարտավորությունների մարման գործընթաց չի իրականացվել::

4. Համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դիմաց կատարվող վճարների դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծի ներկայացում ավագանու հաստատմամբ:

Համայնքում գործում է 1 մուտք մանկապարտեզ և որպես տեղական վճար սահմանվել է ծնողական վճարը՝ 2000 դրամ:

2009թ-ին համայնքի ավագանու կողմից համայնքի տարեկան բյուջեն հաստատվել է 29793.2 հազար դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 30849.5 հազար դրամ:

Կազմակերպության ամենամյա գույքագրման փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ գույքագրումները կատարվում են <Կազմակերպությունների ակտիվների և

պարտավորությունների ամենամյա գույքագրման կարգը հաստատելու մասին> ՀՀ Ֆինանսների նախարարի 2000թ-ի N 102-Ն հրամանով հաստատված ձևաչափերին համապատասխան:

**2. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ**

ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս համայնքում քաղաքաշինական կադաստր համայնքը չի վարում, բացակայում է քաղաքաշինական կանոնադրությունը:

1.Ճարտարապետահատակագծային առաջադրանքների առկայությունը և համապատասխանությունը ՀՀ կառավարության 29.09.2002թ N 1473 որոշման պահանջներին:

Համայնքի ղեկավարի կողմից 2009թ-ին տրվել է 5, 2010թ-ին 2 և 2011թ-ին 1 ճարտարապետահատակագծային առաջադրանքներ, որոնք լրացված են թերի:

2.Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի, դրանց փորձաքննության համաձայնեցման և հաստատման առկայությունը՝ համաձայն ՀՀ կառավարության 21.12.1998թ. թիվ 812 և քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 96 որոշումների պահանջներին և համապատասխանությունը գործող օրենսդրությանը:

Համայնքի ղեկավարի կողմից 2009թ-ին համաձայնեցվել է 5; 2010թ-ին 2 և 2011թ-ին 1 ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր, որոնք համապատասխանում են գործող կարգին:

3.Շինարարության /քանդման / թույլտվության առկայությունը և համապատասխանությունը ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 91 որոշման պահանջներին:

Համայնքի ղեկավարի կողմից 2009թ-ին տրվել է 5; 2010թ-ին 2 և 2011թ-ին 1 շինարարության թույլտվություններ որոնցից 2009 և 2010թթ տրված շինարարության թույլտվությունների վերաբերյալ մարզպետարան չի իրազեկվել խաղտելով ՀՀ կառավարության 02.02.2002թ N91 որոշման պահանջները:

4.Ավարտված շինարարության շահագործման փաստագրման առկայությունը և համապատասխանությունը ՀՀ կառավարության 08.05.03թ.թիվ 626- Ն որոշման պահանջներին:

Համայնքի ղեկավարի կողմից 2010թ-ին տրվել է 2 շինարարության ավարտը փաստագրող ակտեր, որոնցում բացակայում են կատարողական փաստաթղթերը (շինարարության վարման մատյան, ծածկված աշխատանքների ակտերը):

5.Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի և նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության ապահովումը ՀՀ կառավարության 28.10.1998թ.թիվ 660 որոշմամբ:

**3. Հողօգտագործման բնագավառ**

Ստուգմից պարզվեց, որ համաձայն համայնքի հողային հաշվեկշռի համայնքում առկա է՝ 1477,5 հա գյուղ.նշանակության հողեր, որից 180,67 հա վարելահող, 795,51հա արոտ , 501, 57 հա այլ գյուղ.նշանակության հողեր, բացի այդ համայնքի վարչական տարածքում առկա է 1226,23 հա պետ. Սեփականության գյուղ. նշանակության հողեր, որից 125,92 հա վարելահող, 136,81 հա խոտհարք, 602,48 հա արոտ, 361,02 հա այլ գյուղ. հողեր:

Վերը նշված տարածքներից վարձակալությամբ հատկացվել է 60,73 հա գյուղ.նշանակության հողեր համայնքային սեփականությունից, որի տարեկան վարձավճարը կազմում է 1, 628 մլն. դրամ, կնքվել է 34 վարձակալական պայմանագիր:

Պետական սեփականություն հանդիսացող գյուղ.նշանակության հողերից վարձակալությամբ հատկացվել է 249,3 հա հողատարածք, կնքվել էր 16 վարձակալական պայմանագիր: Ստուգման ժամանակահատվածում համայնքում կայացվել էր հողերի օտարման երկու աճուրդ վաճառք, որի արդյունքում օտարվել է 4,68 հա գյուղ.նշանակության հողամաս, աճուրդ-վաճառքներից համայնքի բյուջե է մուտքագրվել 1,511 մլն դրամ գումար: Աճուրդ-վաճառքները տեղի են ունեցել ՀՀ Հողային օրենսդրության պահանջներին համապատասխան, սակայն << Հայաստանի Հանրապետություն>> օրաթերթում տրված

աճուրդի մասին հայտարարությունը տրված է թերի, որի կապակցությամբ համայնքի ղեկավարին րվեց ցուցում, այսուհետև համայնքում կայանալիք հողերի աճուրդ-վաճառքների և վարձակալության մրցույթների հայտարարությունները տա ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխան: Համայնքը չէր պատվիրել պարզեցված գլխավոր հատակագիծ, համապատասխան գումարներ չլինելու պատճառով, որի կապակցությամբ տրվեց ցուցում համայնքի ֆոնդային բյուջեում կուտակված դրամական միջոցները ուղղել համայնքի պարզեցված գլխավոր հատակագիծը պատվիրելուն:

#### **4 Տրանսպորտի բնագավառ.**

- Համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանման և շահագործման կազմակերպման աշխատանքներից՝ կատարվել են միայն համայնքային ենթակայության ճանապարհների նորոգման և բարեկարգման աշխատանքներ՝ 2009թ. մոտ 300.0 հազար դրամի, 2010թ.՝ 500.0 հազար դրամի, 2011թ.՝ 1510.0 հազար դրամի:

-Համայնքում համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկներ և կազմակերպություններ չկան:

-Համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության նշաններ չկան տեղակայված:

#### **5 Առևտրի և ծառայությունների բնագավառ.**

-Առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները հաստատվել են ավագանու 18.12.2009թ. թիվ 28 որոշմամբ:

-Ստուգվող ժամանակահատվածում համայնքի տարածքում գործել են 7 առևտրի օբյեկտներ:

-Առևտրի օբյեկտների հսկողություններ ստուգվող ժամանակաշրջանում իրականացվել են, սակայն ոչ բոլոր օբյեկտներում, հսկողություն իրականացված օբյեկտներում խախտումներ չեն արձանագրվել: Առևտրի օբյեկտներում իրականացված հսկողության փաստաթղթերում կան թերություններ և բացթողումներ՝ կապված <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքի 17-րդ և 17-րդ հոդվածների /մաս 10/ պահանջներին:

Անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով, առևտրի օբյեկտների հսկողությունները իրականացնել լիարժեք՝ գործող բոլոր օբյեկտներում:

- Բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվություններ չեն տրամադրվել, /շրջայցի ժամանակ բացօթյա վաճառքի, առևտրի դեպքեր չեն արձանագրվել/:

-Համայնքի տարածքում ժամը 24.00-ից հետո աշխատող օբյեկտներ չկան:

- Թանկարժեք մետաղների առուվաճառք համայնքի տարածքում չի իրականացվում:

#### **6. Այլ բնագավառներ**

1) 2009թ. գումարվել է ավագանու 11 նիստ, որից 5-ը՝ արտահերթ, 2010թ. 12 նիստ, որից 6-ը՝ արտահերթ, 2011թ.՝ 12 նիստ, որից 7-ը՝ արտահերթ, 2012թ./մինչև ստուգումը/ 2 նիստ, որից 1-ը՝ արտահերթ:

- Ավագանու նիստերին ներկայացած և քվեարկությանը մասնակցած ավագանու անդամների գրանցումներ կատարվել են, սահմանված կարգով:

ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 6-ի նիստի N 39 արձանագրային որոշմամբ հաստատված՝ ՏԻՄ-երի կողմից ընդունվող փաստաթղթերի նախագծերի մշակման մեթոդական ուղեցույցը գյուղապետարանին տրամադրելուց հետո՝ որոշումները ձևաթղթերի վրա հիմնականում համապատասխանում են մեթոդական ուղեցույցի 6-րդ կետի պահանջներին:

- Ստուգվող ժամանակահատվածի ավագանու նիստերի որոշումները մարզպետարան են առաքվել հիմնականում օրենքով սահմանված ժամկետում:

- Ավագանու նիստերի մասին և օրակարգերի հրապարակումները իրականացվում են 2 տեղ՝ 1-ը՝ գյուղապետարանում: <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12՝-րդ հոդվածի պահանջի համաձայն՝ <<Հրապարակումն իրականացվում է համայնքներում՝ համայնքի ավագանու նստավայրում դրանք փակցնելու միջոցով, ինչպես նաև այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երկու հազար բնակչի համար>>: Անհրաժեշտ է ևս մեկ տեղ համայնքի

տարածքում, հրապարակումները փակցնելու և դնելու տեղերը սահմանվում են ավագանու աշխատակարգով: /Համայնքի բնակչության թիվը կազմում է մոտ 2510 մարդ/:

2) Համայնքի ղեկավարը համայնքի 2009-2012թթ. քառամյա զարգացման ծրագիրը ավագանու հաստատմանն է ներկայացրել 25.02.2009թ., /<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 53-րդ հոդված:/

3) Համայնքի ղեկավարը 15.04.2009թ. թիվ 3 որոշմամբ հաստատել է աշխատակազմի կանոնադրությունը (առանձնացված ստորաբաժանում չունեն):

4) Աշխատակազմում առկա է քաղաքացիական պաշտպանության պլանը:

5) Կազմակերպվել է համայնքի բնակիչների հաշվառում. 2009թ.' 2513 մարդ, 2010թ.' 2510 մարդ, 2011թ.' 2500 մարդ, 2012թ.' 2510 մարդ:

6) Համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության օրերը սահմանված են, գրանցումների մատյանը վարվում է սահմանված կարգով: Համայնքի ղեկավարը 12.01.2010թ. թիվ 01 որոշմամբ հաստատել է քաղաքացիների ընդունելության կարգը:

-Ավագանու կողմից քաղաքացիների ընդունելություններ չեն կատարվել:

7) Համայնքի զինապարտների գրանցամատյանները վարվում են:

8) Համայնքում գործում է Կամարիսի <<Կակաչ մանկապարտեզ>> նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /ՀՈԱԿ-ի կանոնադրության պետական գրանցամատյանում գրանցման համարն է 42.210.02332, գրանցման ամսաթիվը 25.04.2006թ. /վկայական N 03Ա 071302/:

Մանկապարտեզի կանոնադրությունը հաստատվել է ավագանու 14.04.2006թ. թիվ 2 որոշմամբ, այն համապատասխանում է 2002 թվականի դեկտեմբերի 26-ի <<Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությանը հավանություն տալու մասին>> N 54 արձանագրային որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությանը:

#### **7. Իրավական հսկողություն**

Ուսումնասիրվող ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից 2009 թ. տրվել է 24, 2010 թ.' 19, 2011 թ.' 24, 2012 թ.' 1 կարգադրություններ, համապատասխանաբար 28, 26, 30, 2 որոշումներ, աշխատակազմի քարտուղարի կողմից 2009 թ. հրաման չի տրվել, 2010 թ. տրվել է 5, 2011 թ.' 5 հրամաններ:

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի իրավական ակտերում արձանագրվել են մի շարք խախտումներ, թերություններ և բացթողումներ:

Քանի որ ավագանու որոշումները 7 օրյա ժամկետում առաքվել են մարզպետարան, որոնք ուսումնասիրվել են մարզպետարանի մասնագետների կողմից և արձանագրված թերությունների վերաբերյալ մարզպետի համապատասխան գրություններով առաջարկվել է կարգավորել, դրանք ներկայումս կարգավորված է:

Համայնքի ղեկավարի 6.10.2009 թ. N 6 կարգադրության մեջ ճիշտ չի գրառվել նորմատիվ իրավական ակտի կրճատ անվանումը, խախտվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության պահանջը, համաձայն որի «Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, «Հայաստանի Հանրապետության օրենք» բառերը», նույնը կրկնվել է N 15 կարգադրության մեջ, 2010 թ. NN 1-3, 6, 9, 16, 17, 19, 21, 24, 25, 26, 2011 թ. NN 1, 5, 7, 9, 10, 13, 15, 16, 18, 19, 20, 22, 28 որոշումներում, աշխատակազմի քարտուղարի 2010 թ. NN 2, 5, 2011 թ. NN 1, 5 հրամաններում:

18.01.2010 թ. N 1 կարգադրությամբ փոփոխություն է կատարվել համայնքի ղեկավարի նոյեմբեր ամսվա NN 18-22 կարգադրություններում, խախտվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության պահանջը, համաձայն որի «իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող կամ իրավական ակտի գործողությունը դադարեցնող իրավական ակտում տրվում է իրավական ակտի լրիվ անվանումը»: Նույնը կրկնվել է NN 2, 3, 6, 9, 10, 2011 թ. NN 3, 7, 9, 23

կարգադրություններում, 2010 թ. NN 4, 8, 16, 30 որոշումներում, աշխատակազմի քարտուղարի 2010 թ. NN 3, 4, 2010 թ. NN 2, 3 հրամաններում:

13.07.2010 թ. N 8 կարգադրության 1-ին կետում գրված է «աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար գյուղապետարանի «ապարատի» աշխատողներին տալ դրամական պարգևատրում մեկ ամսվա աշխատավարձի չափով», բացակայում է անուն, ազգանունները, բացի այդ անհասկանալի է «ապարատի» հասկացությունը: Նույնը կրկնվել է NN 19, 24, 26 կարգադրություններում:

28.08.2011 թ. N 7 կարգադրությամբ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Դանիելյանին տրամադրվել է օրացուցային օրերով հաշվարկված ամենամյա հերթական արձակուրդ: Խախտվել է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի «Ամենամյա արձակուրդը աշխատանքային օրերով հաշվարկվող ժամանակահատված է»: Նույնը կրկնվել է NN 9, 14-16, 20, 22, 23 կարգադրություններում, աշխատակազմի քարտուղարի 2011 թ. NN 2, 3 հրամաններում:

**Դիմումներ և գրություններ.** Համայնքի ղեկավարի աշխատակազմում վարվում է դիմումների մուտքի, գրությունների մուտքի և ելքի մատյաններ, 2009 թվականին մուտք է եղել 50, 2010 թվականին՝ 52, 2011 թվականին՝ 40 դիմումներ, որոնց սահմանված կարգով տրվել է համապատասխան ընթացք: 2009 թ. մուտք է եղել 43, 2010 թ. 65, 2011 թ. 68 գրություններ, համապատասխանաբար ելք է եղել 123, 103, 112 գրություններ: Բոլոր գրությունները ժամանակագրական կարգով գրանցված են գրությունների մուտքի և ելքի մատյաններում, որոնք սահմանված կարգով էջակալված, թելակարված և կնքված են:

Աշխատակազմում 2008 թվականից վարվում է իրավական ակտերի հաշվառման մատյաններ: Համայնքի ղեկավարի կարգադրությունների հաշվառման մատյանում 2009 թ. լրացված չէր թվով 13 կարգադրություն, բացթողումներ կային նաև 2010 թ., 2011 թ. կարգադրությունների և որոշումների հաշվառման մատյաններում:

Համայնքում 1997 թվականից գործում է խնամակալության և հոգեբարձության հանձնաժողով: 21.04.2011 թ. N 5 կարգադրությամբ փոփոխություն է կատարվել հանձնաժողովի կազմում: Ներկայումս հանձնաժողովը բաղկացած է 5 անդամից: Ուսումնասիրվող ժամանակահատվածում հանձնաժողովի կողմից որևէ նիստ չի գումարվել: Ըստ աշխատակազմի քարտուղարի բանավոր հայտարարության «նիստ չի գումարվել, քանի որ համապատասխան դիմումներ մուտք չեն եղել»:

#### **ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՄ**

1. Համայնքի ղեկավարը 15.04.2009թ. թիվ 3 որոշմամբ հաստատել է աշխատակազմի կանոնադրությունը (առանձնացված ստորաբաժանում չունի):

2. Համայնքի ավագանու իրավական ակտերի հաշվառման մատյանները վարվում են ՀՀ կառավարության սահմանված կարգով՝ 2009 թվականից: /<<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 89-րդ հոդված, 1-ին մաս:/

3. Համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են ավագանու 24.12.2009թ. N 32, 22.12.2010թ. N 37, 14.12.2011թ. N 30 որոշումներով /հավելված՝ 1/: Համայնքային ծառայության պաշտոնների մասով հաստիքացուցակը համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման 2006 թվականի նոյեմբերի 20-ի N 203-Ա հրամանով հաստատված՝ Կամարիս գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկին /N 28 հավելվածին/: Համայնքային ծառայողների թիվը երեքն են: Համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափերը համապատասխանում են «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի ու «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին:

4. ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի հունվարի 15-ի N 03-Ա հրամանով կատարվել է փոփոխություն 2006 թվականի նոյեմբերի 20-ի N 203-Ա հրամանի հավելված 28-ում՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի առաջատար պաշտոնը /ծած. 2.1-1/ ուժը կորցրած է ճանաչվել /հրամանի կետ 1-ի 2-րդ ենթակետ/, նշված պաշտոնը շարադրվել է նոր խմբագրությամբ /հր. կ.1, 1.2 ենթակետ/՝ գլխավոր պաշտոնների 2-

րդ ենթախումբ, /ծած. 1.2-1/: Գլխավոր պաշտոնի անձնագիրը համայնքի ղեկավարը հաստատել է 15.06.2009թ. թիվ 17 որոշմամբ:

Համայնքի ղեկավարի 05.04.2010թ. թիվ 04 որոշումով գլխավոր /1.2-1 ծածկագրի/ պաշտոնի անձնագրում կատարվել են փոփոխություններ և լրացումներ օրենսդրության պահանջներին համապատասխան, կապված համայնքային ծառայության, պաշտպանության բնագավառի՝ զինապարտների հաշվառման մատյանի վարման հետ, որտեղ նկատվել են բացթողումներ, որոնց կարգավորման համար ներկայացվել են համապատասխան պարզաբանումներ:

5. Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերում կան թերություններ և բացթողումներ: Արձանագրված հիմնական թերությունները և բացթողումներն են.

- կան սխալներ էջերի համարակալման և վերգրի լրացման մեջ,

- անձնական թերթիկներն ու ինքնակենսագրությունները չեն համապատասխանում կարգի 7-րդ կետի <<դ>> և <<զ>> ենթակետերի պահանջներին,

Անհրաժեշտ է հնարավորինս սեղմ ժամկետում աշխատակազմում վարվող համայնքային ծառայողների անձնական գործերը ամբողջությամբ համապատասխանեցնել ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի N 20-Ն հրամանով սահմանված՝ համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգի պահանջներին:

8. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերի հիման վրա համայնքի ղեկավարը 15.06.2009թ. թիվ 19 որոշումով հաստատել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը /հավելվածներ 1, 2/:

9. Ավագանու 14.04.2009թ. թիվ 9 որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովներում ընդգրկված ավագանու անդամների քանակային և անհատական կազմերը /3 անդամ/ /<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքում փոփոխությունները ուժի մեջ են մտել՝ 06.12.2008թ./:

- Մրցութային և ատեստավորման հանձնաժողովի նախագահը /համայնքի ղեկավարը/ 02.06.2009թ. թիվ 9 կարգադրությամբ հաստատել է մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերը, հանձնաժողովների կազմի փոփոխություններ են կատարվել 24.08.2009թ. թիվ 9 կարգադրությունով: Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգային նիստ՝ հանձնաժողովի նախագահի տեղակալի ընտրության, կայացել է 15.09.2009թ.:

10. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ տարածքային կառավարման նախարարի 19.01.2009թ. N03-Ն հրամանով հաստատված համայնքների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգի հիման վրա, համայնքի ղեկավարը՝ 15.04.2009թ. թիվ 3 որոշմամբ, հաստատել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը: Կանոնակարգը պատշաճ իրազեկվել է աշխատակազմի աշխատակիցներին:

11. Համայնքի ղեկավարի աշխատակազմում համայնքային ծառայողների անձնական գործերի հաշվառման մատյան չի վարվում: ՀՀ օրենսդրությամբ նախատեսված մյուս գրանցամատյանները վարվում են, մատյաններում առկա որոշակի բացթողումների վերացման համար ներկայացվել է խորհրդատվություն:

12. Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնողների /ինչպես նաև մրցույթի արդյունքով նշանակված/ կրթությունը, ստաժը և այլ տվյալները համապատասխանում են համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և տվյալ պաշտոնի անձնագրի պահանջներին:

13. Աշխատակազմի համայնքային ծառայողների գրանցամատյանային (Ձև N 1) տվյալները հիմնականում համապատասխանում են մարզպետարան ներկայացված տվյալներին:

14. Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացված մրցույթի և համայնքային ծառայողների ատեստավորումների փաթեթներում նկատվել են բացթողումներ, որոնց կարգավորման համար ներկայացվել է պարզաբանում:

15. Համայնքի զինապարտների հաշվառման գրանցամատյանները վարվում են: Գրանցամատյանում (Ձև N 1) առկա են անհամապատասխանություններ /զինհաշվառված անձանց ազգանունները, անունները, հայրանունները գլխատառերով չեն լրացված/, տարվում են աշխատանքներ այն ամբողջությամբ համապատասխանեցնելու սահմանված կարգին: /ՏԻՄ հ36/:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ


ՂԵԿԱՎԱՐ՝


Ս. ՀԱԿՈՒՅԱՆ


ԱՆԳԱՄՆԵՐ՝


  


Ռ. ԹՈՒՄՈՅԱՆ

 Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

 Կ. ՀՈՒՆԱՆՅԱՆ

 Ս. ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆ


 Ե. ԱՎԵՏԻՍՅԱՆ

 Ա. ՎԻՐԱԲՅԱՆ

ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Զ. ԵԳՈՐՅԱՆ

Ես համաձայն եմ ընդունել և թույլատրելով իմ կողմից  
ստորագրությունը և թույլատրելով իմ կողմից չունենալ

  
/ստորագրություն/

  
/անուն, ազգանուն/

20 03 2012 թ.